Վերափոխումն Սուրբ Աստուածածնի: Այդ օրը մատաղ են անում և բաժանում ժողովրդին, իսկ եկեղեցում խաղող օրհնում։

ԶԳԵՍՏ ԵՒ ԶԱՐԴ

Փէրիայում թէ տղամարդի և թէ կնոջ տարազը շատ հասարակ է և աղքատ։ Տղամարդիկ հագնում են պարսիկ գիւղացու տարազով, իսկ կանայք՝ Հայաստանի գիւղերից բերած հին տարազով են։ Սպիտակ կտորներ համարեա չեն հագնում, իսկ փոխնորդ մէկից աւելի չունեն։ Այժմ այստեղ առաջ եմ բերում նրանց նկարագիրը։

ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՐԱԶԸ

Շապիկ: Տղամարդի շապիկը հասնում է մինչև ազդրը, ծնկներից մի քիչ վերև. կարում են՝ աղքատները կտաւից, իսկ հարուստները մթխալից. կուրծքը բաց չէ, կոճկւում է մի կոճակով աջ ուսի վրայից. թևերը լայն են և երկար, կարւած է մինչև արմունկը, ապա բաց է, և կոճկւում է 5—6 կոճակով դաստակի վրայից. գործելու ժամանակ գիւղացին այդ մասը վեր է ծալլում, որ շապկի թևերը չը խանգարեն գործին. լւանում են ամիսը մի անգամ։ Ունեն միայն մի փոխնորդ, իսկ փոքր ինչ չքաւորները դրանից էլ զուրկ են։

Վարտիկ (թմբան): Սա կէս գազ լայնութիւն ունի և հասնում է մինչև ոտաթաթը. կարում են՝ աղքատները կտաւից, իսկ հարուստները մթխալից. վերևից ոլորած պարան (խոնջան) են անցկացնում և կապում առջևից. լւանում են երկու ամիսը մի անգամ։

Արխալուղ: Հագնում են շապկի վրայից, որ հասնում է մինչև ծնկները. կարում են՝ աղքատները կտաւից և շամից, իսկ հարուստները չթից. թևերը լայն են և կարւած է մինչև արմունկը, իսկ նրանից ցած՝ բազուկի վրայից կոճկւում է 5 կոճակով։

Կապա: Հագնում են արխալուղի վրայից. սա հասնում